ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ XXVII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

ԳՈՒՐԳԵՆ ԴԵՂԱՄՅԱՆ

Հունվարի 22—24-ը տեղի ունեցավ Հայաստանի կոմունիստական կուսակցության XXVII համագումարը, որտեղ ՀԿԿ Կենտկոմի անցած հինգ տարիների գործունեության մասին հաշվետու զեկուցումով հանդես եկավ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանը։ ՍՄԿԿ XXVI համագումարին ներկայացվող «ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման 1981—1985 թվականների և մինչև 1990 թվականն ընկած ժամանակաշրջանի հիմնական ուղղությունները» ՍՄԿԿ Կենտկոմի նախագծի վերաբերյալ զեկուցեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆ. Տ. Սարգսյանը։ Համագումարը լսեց Հայաստանի կոմկուսի վերստուգիչ հանձնաժողովի հաշվետու զեկուցումը և բոլոր քննարկված հարցերի մասին ընդունեց համապատասխան բանաձևեր։ Համագումարն ընտրեց ՀԿԿ Կենտկոմի նոր կազմ, վերստուգիչ հանձնաժողով և ՍՄԿԿ XXVI համագումարի պատգամավորներ։

Հայաստանի կոմկուսի XXVII համագումարը գործարար, ստեղծագործական մթնոլորտում քննարկեց կուսակցական կազմակերպությունների կատարած աշխատանքն անցած հինգ տարիների ընթացքում, վերլուծեց 10-րդ հնգամյակի տարիներին հանրապետության աշխատավորության ձեռք բերած վիթխարի նվաճումները, ուղենշեց գալիք տասնամյակում տնտեսական և սոցիալական զարգացման հիմնական ուղղությունները և միջոցառումների լայն ծրագիր մշակեց 11-րդ հնգամյակի առաջադրանքները հաջողությամբ կատարելու համար։ Համագումարը նշեց, որ Հայաստանի կոմկուսի Կենտկոմը հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպչական ու քաղաքական խոշոր աշխատանք է կատարել հանրապետության առջև կանգնած խնդիրների կենսագործման ուղղությամբ, կուսակցական կազմակերպությունների գործունեությունը հաջողությամբ նպատակամղել է հանրային արտադրության արդյունավետության բարձրացմանը։ Այդ աշխատանքների փայլուն համագումարը հանդիսացավ հանրապետության աշխատավորության հերոսական ջանքերով 10-րդ հնգամյակի առաջադրանքները ժամկետից շուտ կատարելը։ Սովետական Հայաստանը համամիութենական սոցիալիստական մրցության մեջ չորս տարի անընդմեջ նվաճեց ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի, ՀԱՄԿՄ-ի և Համլկեմ Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշը։ Անցած հինգ տարիների ընթացքում հանրապետությունում հասարակական համախառն արտադրանքն աճեց 38,5, իսկ ազգային եկամուտը՝ 43%-ով։

Հանգամանորեն անդրադառնալով հանրապետության տնտեսական և սոցիալական զարգացման բնագավառում Հայաստանի կոմկուսի XXVI համագումարից հետո ձեռք բերված նվաճումներին, Կ. Ս. Դեմիրճյանը ՀԿԿ Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ ընդգծեց, որ Սովետական Հայաստանն իր արժանի ավանդն է ներդնում մեր երկրում կոմունիստական հասարակարգի նյութա-

տեխնիկական բազայի ստեղծման գործում։ Տարեցտարի բարձրանում է հանրապետության արդյունաբերության առաջատար դերը ժողովրդական տնտեսության մեջ։ Եթե 1975 թ. ազգային եկամտի մեջ արդյունաբերության տեսակարար կշիռը կազմում էր 59,4%, ապա 1980 թ. այն հասավ 63,4%-ի։ Արդյունաբերության հիմնական արտադրական ֆոնդերը նույն ժամանակաշրջանում աճեցին 1,5 անգամ։ Անցած հնգամյակի ընթացքում շահագործման հանձնվեցին ավելի քան 70 խոշոր ձեռնարկություններ, արտադրամասեր և արտադրություններ։ Դրանց թվում էին Հայաստանի ատոմային էլեկտրակայանը, Հրազդանի մեքենաշինական գործարանը, Երևանի, Աբովյանի ու Ղափանի երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարանները, Էջմիածնի խոշոր պանելային տնաշինական կոմբինատը, Աբովյանի գարեջրի, Իջևանի գինու, Սրևանի, Լենինականի ու Հոկտեմբերյանի հացի գործարանները, Գորիսի ու Ղափանի կարի, Ջարենցավանի տրիկոտաժի ֆաբրիկաները և այլն։ Նոր կարողություններ գործարկվեցին արդյունաբերության զանազան ճյուղերում։ Այդ բոլորի շնորհիվ միայն 1970-ական թվականների ընթացքում հանրապետության արդյունաբերությունն ավելի քան կրկնապատկեց թողարկվող արտադրանքի ծավալը։ 1976—1980 թթ. հնգամյա պլանով Հայկական ՍՍՀ-ի համար նախատեսված 43—47%-ի դիմաց այն աճեց 46,2%-ով։ Կարևոր է այն հանգամանքը, որ արդյունաբերական արտադրության ծավալների աճի 85%-ը կատարվել է գործող ձեռնարկությունների ընդլայնման, վերակառուցման ու տեխնիկական վերազինման շնորհիվ։ Դա հանրապետության բանվոր դասակարգի, գիտատեխնիկական մտավորականության և ողջ աշխատավորության կարևոր նվաճումն է։ 10-րդ հնգամյակի տարիներին հանրապետության արդյունաբերական զարգացման գործում մեծ նվաճումների հասան Երևան, Լենինական, Կիրովական, Դիլիջան քաղաքների և Հրազդանի, Աբովյանի ու Նաիրիի շրջանների բանվորական կոլեկտիվները, որոնք իրենց անձնվեր աշխատանքով խոշոր ներդրում կատարեցին կուսակցության առաջադրանքները կատարելու գործում։

Արդյունաբերության բազմակողմանի զարգացման հետ մեկտեղ 10-րդ հնգամյակի տարիներին Հայաստանի կոմունիստական կուսակցությունը հատուկ ուշադրություն դարձրեց ժողովրդական տպաման ապրանքների արտադրության ավելացման վրա։ Այդ ուղղությամբ ՀԿԿ XXVI համագումարի մշակած առաջադրանքները գերակատարվեցին 7%-ով։ Դա կարևոր նշանակություն ունեցավ հանրապետության բնակչության առօրյա պահանջմունքների բավարարման, նրա բարեկեցության աճի ապահովման գործում։

Հայաստանի կոմունիստական կուսակցության XXVII համագումարին ՀԿԿ Կենտկոմի տված հաշվետու զեկուցման մեջ Կ. Ս. Դեմիրճյանը հատուկ կանգ առավ արտադրողական ուժերի տեղաբաշխումը բարելավելու, աշխատանքային ազատ ռեսուրսներն արդյունավետ օգտագործելու հարցի վրա, հարց, որը հանրապետության սակավահողության և առանձնահատուկ բնակլիմայական պայմաններում տնտեսական նպատակահարմարությունից բացի ունի նաև կարևոր սոցիալական նշանակություն։ Անցած հնգամյակի տարիներին հանրապետության փոքր ու միջին քաղաքներում և ավաններում կազմակերպվել են 70 ձեռնարկություններ ու մասնաճյուղեր։ Խոշոր արդյունաբերական հանգույցներ ձևավորվեցին Հրազդանում, Ջարենցավանում, Ջրվեժում և այլ վայրերում։ Համագումարում ընդգծվեց, որ արտադրողական ուժե-

րի նման տեղաբաշխման կուրսը դգալիորեն նպաստում է հանրապետության ներսում բնակչության անկազմակերպ միգրացիայի նվազմանը և փոքր քաղաքների ու ավանների բնակիչներին հնարավորություն է տալիս շփվելու ինդուստրիալ աշխատանքին, որի վերափոխիչ դերը հանրահայտ է։ Միաժամանակ, այն բարերար ազդեցություն ունի շրջակայքի գյուղական բնակչության աշխատանքային զբաղվածության բարձրացման, նրա սոցիալական կառուցվածքի փոփոխության վրա։

Հայտնի է, որ ՍՄԿԿ XXV համագումարը սովետական ժողովրդին նպատակադրեց ստեղծագործական պայքար ծավալելու արտադրության որակի բարելավման, բարձրորակ արտադրանք թողարկելու համար։ Կենսագործելով այդ կարևոր ցուցումը, Հայաստանի կոմունիստական կուսակցությունն անցած հինգ տարիների ընթացքում որոշակի նվաճումներ ձեռք բերեց արտադրանքի տեխնիկական մակարդակի և որակի բարձրացման ասպարեզում։ Հետևողական աշխատանք է կատարվել արտադրանքի որակի կառավարման հանրապետական համակարգ մշակելու գործում։ Կուսակցական կազմակերպությունների անդուլ աշխատանքի շնորհիվ 10-րդ հնգամյակում բարձրորակ արտադրանքի արտադրության ծավալն աճեց ավելի քան 4 անգամ։ 1980 թ. հանրապետությունում պետական որականիշով թողարկվում էր 2600 արտադրատեսակ։ Դա կազմում էր ապրանքային արտադրանքի ընդհանուր ծավալի 18,3%-ը։ Համագումարում նշվեց, որ առանձին արդյունաբերական միավորումներում, որտեղ անհրաժեշտ ուշադրություն է դարձվում գիտատեխնիկական առաջադիմության նվաճումների արմատավորման վրա, պետական որականիշով թողարկվող արտադրանքը հասնում է 60—80%-ի։ Դրանցից են «Հայէլեկտրաապարատ», «Հայէլեկտրաշարժիչ», «Հայէլեկտրալույս», կարի «Գարուն», կոշիկի «Մատիս» միավորումները, Կիրովականի ավտոգենային մեքենաշինության գործարանը և այլն։ «Արդյունաբերության զարգացման գործում ձեռք բերած նվաճումները,— ՀԿԿ Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ ասաց Կ. Ս. Դեմիրճյանը,— մեր հերոսական բանվոր դասակարգի, ինժեներատեխնիկական անձնակազմի, գիտնականների, աշխատավորական կոլեկտիվների, այն բոլորի անձնվեր աշխատանքի արգասիքն են, ովքեր առանց ուժերը խնայելու իրենց ավանդն են ներդնում ընդհանուր գործի մեջ»։

Համագումարում, խոսելով արդյունաբերության բնագավառում ձեռք բերված խոշոր նվաճումների մասին, Կ. Ս. Դեմիրճյանը կանգ առավ նաև կուսակցական կազմակերպությունների գործունեության մեջ տեղ գտած թերությունների ու վրիպումների վրա։ Դեռևս ոչ բոլոր ձեռնարկություններն են կարողանում ինչպես հարկն է մոբիլիզացնել իրենց ռեսուրսները և ժամանակին կատարել ստանձնած պարտավորությունները։ Հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների 9%-ը չի ապահովել արտադրանքի արտադրության և իրացման ծավալի, 18%-ը՝ աշխատանքի արտադրողականության աճի պլանների կատարումը։ 1976—1980 թթ. հասարակական աշխատանքի արտադրողականության աճը կազմեց 119%, հնգամյա պլանով նախատեսված 129,9%-ի փոխարեն։ Համագումարում սուր և գործնական քննադատության ենթարկվեցին մի շարք մինիստրություններ ու արդյունաբերական միավորումներ, որոնք չեն ապահովել աշխատանքի արտադրողականության հնգամյակի առաջադրանքները և նույնիսկ զիջել են 9-րդ հնգամյակում ձեռք

բերած բնագծերը։ Դրա հիմնական պատճառն այն է, որ դեռևս անբավարար աշխատանք է կատարվում նորագույն տեխնիկայի և առաջավոր տեխնոլոգիայի ներդրման, արտադրության կազմակերպման կատարելագործման, բանվորական ու ինժեներատեխնիկական կադրերի որակավորման բարձրացման և այլ հարցերի վրա։ Գիտատեխնիկական առաջադիմության արդի պայմաններում աշխատատար պրոցեսների մեքենայացումը և ձեռքի սակավարդյունավետ աշխատանքի կրճատումը ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական կարևոր նշանակություն ունի։ Համագումարը կուսակցական կազմակերպությունների ու գերատեսչությունների ղեկավարներից պահանջեց հիմնական ուշադրությունը բևեռել աշխատանքային կարգապահության, խնայողության ռեժիմի ամրապնդման, հումքի ու էներգիայի արդյունավետ օգտագործման վրա։ Խնդիր դրվեց հասնել այն բանին, որպեսզի 11-րդ հնգամյակում հետևողականորեն իրականացվի «Հայաստանի ապրանքներին գերազանց որակ» նշանաբանը։

Հանրապետության կուսակցական կազմակերպությունները հաշվետու շրջանում զգալի հաջողություններ են ձեռք բերել ՍՄԿԿ ագրարային քաղաքականության հետևողական կենսագործման բնագավառում։ Գյուղատնտեսության վերելքին ուղղված ագրարային կոմպլեքսի աստիճանական արմատավորման շնորհիվ, առաջին հերթին ամրապնդվեց գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան։ Հնգամյակի ընթացքում գյուղատնտեսության մեջ ներդրվեց 1,2 միլիարդ ռուբլի, որը նախորդ հնգամյակում ներդրվածից ավել է 81%-ով։ Այդ գումարի 56%-ը ներդրվել է ջրաշինարարական աշխատանքների մեջ, որի շնորհիվ ոռոգելի հողատարածություններն ընդարձակվել են մոտ 30 հազար հեկտարով և ջրարբիացվել է շուրջ 70 հազար հեկտար արոտավայր։ Հաջողությամբ կենսագործվում է «Հայկական ՍՍՀ-ում ոռոգելի հողատարածության հետագա զարգացման և նրա արդյունավետության բարձրացման միջոցառումների մասին» ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումը։ Խոշոր ջրանցքներից բացի կառուցվել են մի շարք ջրամբարներ, վերակառուցվել են ոռոգման սիստեմները։ Հանրապետության սակավահողության պայմաններում ջրաշինարարական աշխատանքների ծավալումը հնարավորություն է տալիս ընդլայնելու գյուղատնտեսության համար պիտանի հողատեսքերը, ավելի արդյունավետ օգտագործելու բնական ռեսուրսներն ու աշխատուժը։

Հայտնի է, որ արդի պայմաններում կուսակցության ագրարային ծրագրում հատուկ ուշադրություն է դարձվում գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման և համակենտրոնացման վրա, որպեսզի կոմպլեքսային մեքենայացման միջոցով այն աստիճանաբար փոխադրվի արդյունաբերական ռելսերի վրա։ Անցած հնգամյակում, ինչպես նշվեց համագումարում, հանրապետությունում կառուցվել են մեծ թվով պետական անասնապահական համալիրներ, թռչնաֆաբրիկաներ, մեքենայացվել են առանձին տնտեսությունների ֆերմաները և այլն։ Այժմ հանրապետությունում գործում են ավելի քան 60 միջտնտեսային ձեռնարկություններ և կազմակերպություններ, ագրարդյունաբերական միավորներ։ Կրկնակի ավելացել են համակցված կերերի արդյունաբերության կարողությունները։ Հաշվետու շրջանում զգալիորեն ավելացել է հանքային պարարտանյութերի և թունաքիմիկատների մատակարարումը, որը, անկասկած, բարենպաստ ազդեցություն ունեցավ գյուղատնտե-

սական մթերքների բերքատվության բարձրացման վրա։ Նախորդ հնգամյակի համեմատությամբ զգալիորեն ավելացել է հացահատիկի, բանջարեղենի, խաղողի, պտուղների և կարտոֆիլի միջին բերքատվությունը։ Որոշակի հաջողություններ են ձեռք բերվել անասնապահական մթերքների արտադրության ավելացման բնագավառում։ 10-րդ հնգամյակում մեկ կովի կաթնատվությունն ավելացավ 275 կգ-ով։ Ցանովի և բնական խոտհարքների բարելավման միջոցով զգալիորեն ամրապնդվեց կերի բազան. միջին հաշվով տարեկան մոտ 30%-ով ավելի կեր է կուտակվել, քան նախորդ հնգամյակի յուրաքանչյուր տարում։ Ձեռնարկված միջոցառումների և կուսակցական կազմակերպությունների հետևողական աշխատանքների շնորհիվ, չնայած բնակլիմայական անբարենպաստ պայմաններին, գյուղատնտեսության համախառն արտադրանքի տարեկան աճը կազմեց 24,2%՝ հնգամյա պլանով նախատեսված 24,1%-ի փոխարեն։ Գերակատարվեցին գյուղատնտեսական մթերքների ինչպես արտադրության, այնպես էլ պետական մթերումների առաջադրանքները։ Համագումարում Կ. Ս. Դեմիրճյանը դրվատանքի խոսքեր ասաց խոշոր նվաճումներ ձեռք բերած Անիի և Արթիկի դաշտավարների, Ախուրյանի և Սպիտակի ճակնդեղագործների, Արտաշատի և Արարատի խաղողագործների, Ստեփանավանի և Կալինինոյի կարտոֆիլագործների, Հրազդանի, Նաիրիի և Կրասնոսելսկի շրջանների անասնապահների մասին։ Ձեռք բերած նվաճումների համար գյուղատնտեսական արտադրության հարյուրավոր առաջավորներ արժանացան կառավարական բարձր պարգևների, իսկ Ռ. Բաղալյանին, Հ. Ղուկասյանին, Պ. Պետրոսյանին և Ա. Հայրապետյանին շնորհվեց սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում։ Բարձր գնահատելով գյուղի աշխատավորության հայրենանվեր աշխատանքն ու ձեռք բերած նվաճումները, Կ. Ս. Դեմիրճյանն ասաց. «Այդ ամենի համար, հայրենասիրական, ոգեշունչ աշխատանքի համար թույլ տվեք համագումարի անունից սրտագին ու խոր երախտագիտություն հայտնել գյուղի մեր բոլոր պանծալի աշխատավորներին»։

ՀԿԿ XXVII համագումարում հատուկ քննարկվեցին հանրապետության հողային և ջրային **ռեսուրսների պահպանման և արդյունավետ օգտագործման** հարցերը։ Եթե նախկինում թույլ տրված մի շարք սխալների հետևանքով 1950—1975 թթ. հանրապետության վարելահողերի տարածությունը մոտ 75 հազար հեկտարով կրճատվել էր, ապա 1976—1980 թթ. այն ավելացավ 5,5 հազար հեկտարով։ Դրանով իսկ ոչ միայն կասեցվեց վարելահողերի շոգայման և շրջանառությունից դուրսգրման արատավոր պրակտիկան, այլև դրանց տարածությունը սկսեց ավելանալ։ Դա մեր հանրապետության համար շատ կարևոր, կենսական նշանակություն ունի։ Սովետական Հայաստանը ոչ միայն սակավահող, այլև սակավաջուր հանրապետություն է։ Այդ է պատճառը, որ կուսակցությունը միշտ էլ հատուկ ուշադրություն է դարձրել ջրաշինարարական աշխատանքներին։ Սակայն, չնայած ոռոգման ցանցի ընդլայնման և մելիորատիվ աշխատանքների վրա հսկայական միջոցներ են ծախսվում, ոռոգման ջուրը դեռևս անբավարար է օգտագործվում և թույլ են տրվում ջրի մեծ չափերի հասնող կորուստներ։ Որոշակի խզում կա ոռոգման սիստեմների կառուցման և ոռոգելի հողատարածությունների օգտագործման ժամկետների միջև։ Անտնտեսարության հետևանքով հնգամյակի ընթացքում ամեն տարի ավելի քան 20 հազար հեկտար մշակելի վարելահող, այդ թվում 5,7 հազար հեկտար ոռոգելի տարածություն չի օգտագործվել։ Անշուշտ, այդ

բոլորը բացասաբար են անդրադարձել գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման վրա։

Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմը, հաշվի առնելով հանրապետության գյուղատնտեսության զարգացման հեռանկարները, հատուկ ուշադրություն է դարձրել այգեգործության և պտղաբուծության զարգացման վրա։ Հաշվետու շրջանում հիմնվել են 5098 հեկտար խաղողի և 5582 հեկտար պտղատու այգիներ։ Որոշ չափով վերացվել է այգիների նոսրությունը։ Այդ ուղղությամբ դրական փորձ է կուտակվել Աշտարակի, Նաիրիի, Արտաշատի, Հոկտեմբերյանի և Էջմիածնի կուսակցական կազմակերպություններում։ Համագումարում միաժամանակ քննադատվեցին Եղեգնաձորի, Գորիսի, Ստեփանավանի և Թումանյանի կուսակցական կազմակերպությունների անբավարար աշխատանքները՝ այգեգործության զարգացման ուղղությամբ։

Համագումարին ՀԿԿ Կենտկոմի տված հաշվետու զեկուցման մեջ քննադատաբար վերլուծվեց անասնապահության վիճակը։ Չնայած ձեռք բերված որոշակի նվաճումներին, առանձին շրջաններում ու տնտեսություններում ոչ միայն առաջընթաց չի նկատվում, այլև տարեցտարի անասունների գլխաքանակն ու մթերատվությունը նվազում է։ Կաթի արտադրությամբ զբաղվող 612 կոլեկտիվ և պետական տնտեսություններից 193-ում մեկ կովի կաթնատվությունը կազմում է 960—1650 կգ։ Հիմնականում անբավարար խնամքի հետևանքով վերջին հինգ տարիների ընթացքում կաթնատու կովերի գլխաքանակը տարեկան 2000-ով նվազել է։ Դեռևս իրենց չեն արդարացնում անասնապահական համալիրներն ու թռչնաֆաբրիկաները։ Համագումարը ծավալուն միջոցառումներ մշակեց հանրապետությունում անասնապահական մթերքների արտադրության ավելացման ուղղությամբ։

ՀԿԿ Կենտկոմի ղեկավարությամբ անցած հնգամյակում հանրապետությունում իրականացվեց կապիտալ շինարարության վիթխարի ծրագիր։ Շահագործման հանձնվեցին այնպիսի հզոր կառույցներ, ինչպիսիք են Երևանի հարավային օդանավակայանի առաջին հերթը, Աղստի, Ջողազի ջրամբարները, Թալինի, Սևանի խտացրած կերերի գործարանները, անասնապահական համալիրներ և այլն։ Մեծ թափ է ստացել բնակարանային շինարարությունը։ 1976—1980 թթ. հանրապետության բնակարանային ֆոնդն ավելացել է 5,6 միլիոն քառակուսի մետրով, որի շնորհիվ 570 հազար մարդ բարելավել է իր բնակարանային պայմանները։ Կառուցվել է 121 կմ երկաթուղի և 370 կմ ավտոմոբիլային ճանապարհ, ջրատարներ և այլն։

Համագումարում լուրջ թերություններ բացահայտվեցին կապիտալ շինարարության բնագավառում։ Նոր տեխնիկայի թույլ արմատավորման, աշխատանքների ցածր որակի և պլանների թերակատարման համար քննադատվեցին արդյունաբերական շինարարության, գյուղական շինարարության, ավտոմոբիլային ճանապարհների շինարարության և շահագործման մինիստրությունները, «Հայարդշին» ու «Հայտրանսշին» շինարարական կազմակերպությունները։ Լուրջ մտահոգության առարկա հանդիսացավ այն հարցը, որ ճարտարապետները դեռևս ինչպես հարկն է չեն կարողանում օգտագործելով եղած հնարավորությունները՝ ազգային ճարտարապետության առաջավոր ավանդույթներն արդյունավետ զուգորդել արդիական ճարտարապետական տեղբունքներին։

Համագումարը պահանջեց է՛լ ավելի բարելավել ժողովրդական տնտեսության կառավարումը, ավելի արդյունավետ օգտագործել տեղական ռեսուրսները, կենսագործել խնայողության խիստ ռեժիմ։ Այլ կերպ ասած՝ համագումարը խնդիր դրեց ընտրել այնպիսի միջոցներ ու եղանակներ, որոնք կարող են ուժերի և միջոցների նվազագույն ծախսման պայմաններում տալ առավելագույն արդյունք։

ՀԿԿ XXVII համագումարում մեկ անգամ ևս ընդգծվեց, որ մեր կուսակցության գործունեության գերագույն նպատակը բնակչության նյութական և հոգևոր պահանջմունքների առավել լրիվ բավարարումն է։ Դա պայմանավորված է մի կողմից սպառողական ապրանքների արտադրության ավելացմամբ, իսկ մյուս կողմից՝ բնակչության ռեալ եկամուտների աճով։ Անցած հնգամյակում աշխատավորության ռեալ եկամուտները աճեցին 22,8%-ով։ Սպառման հանրային ֆոնդից բնակչության ստացած վճարումների և արտոնությունների գումարը հնգամյակի ընթացքում ավելացավ 31%-ով։ Ապրանքաշրջանառությունը նույն ժամանակաշրջանում աճեց 35%-ով, բնակչության մեկ շնչին ընկնող կենցաղային ծառայություններն ավելացան 52,7%-ով։ Այս տվյալները աշխատավորության բարեկեցության աճի լավագույն վկայությունն են։ Միաժամանակ, համագումարում նշվեց, որ սպասարկման ոլորտի զարգացման տեմպերը դեռևս ետ են մնում բնակչության պահանջմունքների աճից։ Հատկապես թույլ են առևտրի օբյեկտների տեխնիկական վերապինման ու վերակառուցման, առևտրական գործառնությունների մեքենայացման ու ավտոմատացման աշխատանքները։

Հաշվետու ժամանակաշրջանում զգալիորեն բարձրացել է գիտական հետազոտությունների արդյունավետությունը, ամրապնդվել նրա կապը արտադրության հետ։ Ստեղծվել են նոր գիտահետազոտական ինստիտուտներ ու բաժիններ, 8%-ով աճել է գիտական աշխատողների թիվը։ Համագումարում հատուկ ուշադրություն դարձվեց գիտական աշխատողների նոր հերթափոխի պատրաստման վրա։ ՀԿԿ XXVII համագումարն ըստ ամենայնի անդրադարձավ գաղափարական, քաղաքական-դաստիարակչական աշխատանքների բնագավառում կուսակցական կազմակերպությունների ծավալած գործունեությանը, որը նպատակամղված է նոր, կոմունիստական հասարակարգի մարդու ձևավորմանը։ Անշուշտ, անցած հնգամյակում զգալիորեն բարելավվել են աշխատավորության շրջանում տարվող քաղաքական-դաստիարակչական աշխատանքները։ Մշտապես անցկացվում են միասնական քաղաքեր, հասարակական-քաղաքական ընթերցումներ ու գիտագործնական կոնֆերանսներ մեր երկրի ներքին ու արտաքին պրոբլեմատիկ հարցերի վերաբերյալ և այլն։ Որոշակի աշխատանք է կատարվել աշխատավորության ինտերնացիոնալ և հայրենասիրական դաստիարակության բնագավառում։ Մեծ խանդավառությամբ տոնվեցին Հայաստանը Ռուսաստանի հետ միավորվելու 150-ամյակը և Սովետական Հայաստանի 60-ամյակը։

ՀԿԿ XXVII համագումարը լիովին հավանություն տվեց տնտեսական և կուլտուրական շինարարության, հանրապետության ամբողջ հասարակական-քաղաքական կյանքի ղեկավարման ասպարեզում Հայաստանի կոմկուսի Կենտկոմի պրակտիկ գործունեությանը։

Անդրադառնալով հանրապետության տնտեսական և սոցիալական զարգացման հեռանկարներին, համագումարն ընդգծեց, որ 11-րդ հնգամյակը

մեծագործությունների նոր ուղիներ է բացում կուսակցական կազմակերպությունների, աշխատավորական կոլեկտիվների առջև։ ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆ. Տ. Սարգսյանի զեկուցման մեջ ընդգծվեց, որ 11-րդ հնգամյակի ընթացքում Սովետական Հայաստանի արդյունաբերական արտադրանքի արտադրությունը կշարունակի աճել բարձր տեմպերով և կավելանա 29—32%-ով։ Շարունակվելու է արդյունաբերության կառուցվածքը բարելավելու, հիմնականում ռադիոտեխնիկական և էլեկտրոնային արդյունաբերության, սարքաշինության ու ճշգրիտ մեքենաշինության մյուս ճյուղերի բաժինը մեծացնելու կուրսը։ Նախատեսվում է ընդլայնել և զարգացնել արդյունաբերության առավել աշխատատար, բայց սակավ մետաղատար ու էներգատար ճյուղերը, ավելի արդյունավետ օգտագործել հումքն ու աշխատանքային ռեսուրսները։ Հանրապետության արդյունաբերական զարգացումը կընթանա ինչպես նոր ձեռնարկությունների կառուցման, այնպես էլ գործող ձեռնարկությունների վերակառուցման և տեխնիկական վերազինման ուղիով։ Կկառուցվեն ավտոբեռնիչների, ինչպես նաև մի քանի ռադիոէլեկտրոնային գործարաններ, պարֆյումերիայի, գործվածքային ֆաբրիկաներ և այլն։ Նոր կարողություններ կգործարկվեն Հրազդանի մեքենաշինական գործարանում։ Կվերակառուցվեն գունավոր մետալուրգիական, քիմիական, ինչպես նաև արդյունաբերական այլ ճյուղերի ձեռնարկությունները։ Առավել բարձր տեմպերով կշարունակի զարգանալ ծանր ինդուստրիան. արդյունաբերական արտադրության ընդհանուր ծավալի մեջ նրա բաժինը կկազմի 65%։

Հիմնական ուղղությունների նախագծով նախատեսվում է հետևողականորեն ավելացնել ժողովրդական սպառման ապրանքների արտադրությունը։ Հատուկ ուշադրություն է դարձվում հատկապես հանրապետությունում թեթև, սննդի ու շինանյութերի արդյունաբերության զարգացման վրա։

Համաժողովրդական քննարկման ներկայացված մեր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղություններում մեծ տեղ է հատկացված նաև գյուղատնտեսության բազմակողմանի զարգացմանը։ Հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքի միջին տարեկան ծավալը 1981—1985 թթ. ավելանալու է 10—12%-ով։ Նախատեսվում է գյուղատնտեսական արտադրության հետագա ինտենսիվացմանը հասնել հետագա մասնագիտացման ու համակենտրոնացման, կոմպլեքսային մեքենայացման, քիմիացման ու մելիորացման, ինչպես նաև հողային ու ջրային ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործման միջոցով։ Հատուկ ուշադրություն է դարձվում ջերմոցային բանջարաբուծության զարգացմանը։ Հնգամյակի տարիներին գյուղատնտեսական արտադրության մեջ կապիտալ ներդրումները, ներառյալ նաև կոլտնտեսությունների միջոցները կկազմեն 1700 միլիոն ռուբլի, որից ավելի քան 500 միլիոնը հատկացվելու է իրիգացիոն-մելիորատիվ շինարարությանը։ Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի զարգացման բարձր տեմպերը հնարավորություն կրնձեռնի ապահովելու բնակչության կենսամակարդակի հետագա բարձրացումը։ Բնակչության մեկ շնչին ընկնող ռեալ եկամուտները կաճեն 15,4%-ով։

Իր եզրափակման ճառում ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանը նշեց. «Համադումարը, և դրանումն է նրա կարևորագույն նշանակությունը, հանրապետության կուսակցական կազմակերպությանը նպատա-

կամքեց կազմակերպական, գաղափարախոսական և քաղաքական-դաստիարակչական աշխատանքի ըստ ամենայնի ուժեղացմանը, էկոնոմիկայի, գիտության և կուլտուրայի հետագա զարգացման մեծ խնդիրների հաջող կատարմանը, աշխատավորների բարեկեցության բարձրացմանը, տասնմեկերորդ հնգամյակի ստեղծարար, վիթխարի ծրագրի կենսագործմանը»։

Համագումարը վառ կերպով արտահայտեց հայ ժողովրդի անսահման հավատարմությունը սոցիալիստական հայրենիքին, սովետական հայրենասիրության և ինտերնացիոնալիզմի, ժողովուրդների բարեկամության և եղբայրության վեհ գաղափարներին։ Տարակույս չկա, որ Սովետական Հայաստանի աշխատավորությունը, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի ղեկավարությամբ նոր հաջողությունների կհասնի կոմունիստական հասարակարգի կառուցման գործում։

XXVII СЪЕЗД КОМПАРТИИ АРМЕНИИ

ГУРГЕН ГЕГАМЯН

Резюме

Завершившаяся десятая пятилетка экономического и социального развития страны явилась важным шагом на пути создания материально-технической базы коммунизма. Вместе со всем советским народом новых высот в развитии народного хозяйства и культуры достигли трудящиеся Советской Армении. Они успешно выполнили задания десятого пятилетнего плана (1976—1980 гг.); республика четыре раза подряд признавалась победителем Всесоюзного социалистического соревнования. Эти успехи были подытожены XXVII съездом Коммунистической партии Армении (январь 1981 г.), который наметил также основные направления развития республики в годы одиннадцатой пятилетки и на перспективу до 1990 г.